

կան, երախտագիտական, հատուցանելի «Բազմավէպ»-ին այս յարմարագոյն առիթով: 1926-ին Մարտիկոյ մէջ ձեռագիր պատանեկան զբաղմունքի մը «Յօդ», քաջալեր հանդիսացաւ և հինգ տարի սիրով փոխանակից իր արժէքին ու ծաւալին հաղիւ մէկ հարիւրերորդը կազմող այս խաղալիկին հետ: Ատիկա այնքան բարձր քաջալերանք ու գնահատանք մըն էր, որ եթէ պատանեկան շրջանին հետ փոխուեցան նաեւ զբաղումն ու պարագաներն, այլ ձեռքէս չձգեցի գրելը, որ ինծի նշանակեց կեանքը ապրելու միակ արժանի պատճառը: Ով որ գրչով հոգեկան բաւարարութիւն չի ստանար, ինչ կը հասկնայ այս կեանքը ապրելէն:

Այս հարիւրամեակը «Բազմավէպ»-ի բարձրանալու աստիճանին թող մէկ սանդխտ մտաւ ըլլայ տակաւին:

Լաւագոյն կամեցողութիւններով Չերդ Գերապատութեան

ԼԵՒՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

(«Պատանեկան Արձագանգ»-ի խմբագրութիւնէն)

«ԲԱԶՄԱՎԷՊ»-Ի ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Այս թերթին զրկուած մասնաւոր թղթակցութիւն մը կը հաղորդէր թէ Հոկտ. 18-ին և 19-ին Վենետիկի մէջ վայելուչ հանդիսաւորութեամբ տօնուած է «Բազմավէպ» ամսագրի 100-ամեայ յորելեանը: «Պայքար» որ թէեւ իր ներկայացուցիչը չունեցաւ հանդիսութիւններուն մէջ, ինչպէս որ ունեցած էին կարգ մը ուրիշ թերթեր, մշտապէս բարեկամ մը եղած է Միթթարեան հայրերու կողմէ հրատարակուած ոչ միայն «Բազմավէպ»-ին, այլ Հայ Վենետիկի մշակութային ամէն կարգի ձեռնարկներուն: Արդարեւ, ամբողջ դար մը անվհատ ու շարունակաբար հրատարակել «Բազմավէպ»-ի նման զուտ մասնագիտական բովանդակութիւն ունեցող ամսաթերթ մը, քիչերու արուած յաջողութիւն մըն է: Վենետիկի մեր գործունեայ և նուիրեալ Հայրերը ամէն իրաւունք ունին հպարտանալու իրենց այս յաջողութեան հա-

մար, որ խոշոր նպաստ մը եղաւ նաեւ մեր գայութեան, մանաւանդ՝ պատմական ու բանասիրական կալուածներուն:

Աղլանտեանի այս կողմն ալ վերջերս Ամերիկեան ամսաթերթ մը - Տէր Լէթինթիք Մընթլի - տօնեց իր իննըսունամեայ յորելեանը ու այդ առիթով երկրին մամուլը արդար հպարտութեամբ ծանրացաւ որքան թերթին պարունակութեան արժէքին, նոյնքան ալ ու թերեւս քիչ մըն ալ աւելի անոր երկարակեցութեան հանգամանքին վրայ:

«Բազմավէպ»-ի կտրած ճամբան, այդ ալ մեր իրականութեան մէջ, պանծալի ու լուսանշող ճամբայ մըն է: Առանց Վենետիկի Հայրերուն յարատեւութեան և անվհատ նուիրումին, ամէն կասկած է վեր է որ ամսաթերթին օրերը համրուած պիտի ըլլային: Գաղտնիք չէ որ մեր մէջ շատ քիչ է թիւը այն հրատարակութիւններուն, որ իրենց կեանքը կը պարտին ընթերցող հասարակութեան գնահատութեան: Թերեւս այդ կարգի հրատարակութիւններ գոյութիւն ալ չունին: Հայ մամուլը միշտ կանգուն մնացած է հրատարակչներուն գերմարդկային գոհողութիւններուն շնորհիւ: Պարզապէս այդ իրողութիւնն իսկ բաւական պիտի ըլլար պանծացնելու Վենետիկի Հայրերուն նուիրումն ու հայ գրին ու գրականութեան ծառայելու անոնց յուսահատիլ չգիտցող ոգին:

Որքան որ ալ հեռուէն ըլլայ, «Պայքար» կը ձայնակցի սրտեռանդն «Բազմավէպ»-ի բարերաստիկ յորելեանին առիթով արտայայտուած այնքան անկեղծ բարեմաղթութիւններուն ու կոչ կ'ընէ գրասէր հայերուն, որ բաժանորդագրուելով «Բազմավէպ»-ին օժանդակ ըլլան անոր յարատեւման ու բարգաւաճման: «Բազմավէպ» արժանի է իր երկրորդ հարիւրամեակը տօնելու իրաւունքին, իսկ թերթին անձնուէր հրատարակիչները՝ մեր բոլորին գնահատանքին ու գուրգուրանքին:

ՊԱՅՔԱՐ

Չորեքշաբթի, Նոյեմբեր 12, 1947.

ՏԻԳՐԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Խոր ու կակծագին սուգի մը մէջ համակելով Տիգր Տիգրան Պօղոսեան կը բաժնուէր անգարձ իր ընտանիքէն, անցնող տարւոյն Դեկտեմբեր 25-ի իրիկունը՝ անբացատրելի ցաւ մը խառնելով տօնական օրուան ուրախութիւններուն:

«Բազմավէպ» կը յայտնէ հոս իր ցաւակցութիւնները աղնիւ այրի Տիգր Մարկրիտին և իր սիրելի զաւակներուն՝ Տիկ. Ժիւլիէթին, Օր. Պերճուհիին, Պր. Վահէին և բոլոր հեռուոր ու մօտաւոր ազգականներուն:

Ողբացեալը՝ տիպար մը աղնուստիրտ ու հայրենասէր հայու, ծնած էր Տրապիզոն 19 Սեպտեմբեր 1884-ին: Իր նախակրթարանի ուսումնները կատարած է Տրապիզոն Միթթարեանց վարժարանին մէջ, մանուկ հասակէն ստանալով ազգային կրթութեան հետ, ճշմարիտ հայրենասէր և կրօնասէրի ողջ սկզբունքները՝ որոնց հաւատարիմ մնացած է յետոյ իր կեանքի բովանդակ ընթացքին: Իր ուսումները ան շարունակած ու լրացուցած է Սանասարեան վարժարանի մէջ: Բայց նա կը պարձէր միշտ Միթթարեան նախկին սան մը ըլլալուն, ու այդ ախպորը կը սիրէր գործածել երբ մանաւանդ կը պաշարուէր երիտասարդներու խումբէ մը որ հայրենասիրութեան վրայ կը ճառէին: Արձանագրուած Միթթարեան Նախկին Սանուց Միթթարեան, իր խրախոյսով և միջոցներով կը քաջալերէր ամէն օգտակար ու ազգային ձեռնարկ, առանց մերժելու իր ձեռքէն եկած օգնութիւնը:

Արթնամիտ ու գործունեայ նկարագրի տէր՝ նետուէլով կեանքի ասպարէզին մէջ, տակաւին շատ երիտասարդ ցոյց կու տար իր մտացի առեւտրականի ձիրքը. իր նախասիրած նիւթն էր ծխախոտի վաճառականութիւնը հետեւելով իր հօրը տուած ուղղութեան: Ան փութով կը գառնար մասնագէտ մը ծխախոտի և մանաւանդ արեւելեան ծխախոտի, ու կը հասնէր մինչեւ իսկ ըլլալու Օսմանեան Տէրութեան մէջ, ծխախոտի մենաշնորհին վարիչը: Իր համբաւը այնքան տարածուած էր՝ որ Եւրոպական մեծագոյն առեւտրական տուններ իրեն կը գիւմէին երբ հարկ

ըլլար մեծաքանակ գնումներ կատարել: Բռնած էր ան թրիէստի շուկան, կապելով Եգիպտոսի Մաթոսեան վաճառատունը Եւրոպայի կարեւոր կեդրոններու հետ:

Առաջին միջազգային պատերազմի աղէտներէն աղաթելով իր սիրելի ընտանիքը կը փոխադրէր Խաղիա, միանգամայն շարունակելով իր առեւտրական գործունէութիւնը՝ հաստատուած Եւրոպայի սրտին վրայ: Վերջին համաշխարհային պատերազմը կու գար քիչ մը վրդովել իր ծրագիրները և աղօտացնել իր գործունէութեան փայլը: Բայց անոր անտելիտալի կամքին գիմաց չկրցաւ թուամբ կանգնել, այնպէս որ հաղիւ թէ եկան խաղաղութեան տարիները, ան վերստին ձեռք զարկաւ վերսկսելու իր ընդհատուած գործը, ու այս նպատակով անցաւ ան վերջերս Անգլիա և Ֆրանսա, որպէս զի կազմակերպէ իր նախկին գործունէութիւնը, սակայն անակնկալ մահը խլեց զայն առ յաւէտ իր սիրելիներէն և իր գործէն:

Իր հոգին հիմա կը հանգչի անմահներու լոյսին մէջ, և իր սգաւոր ընտանիքի անդամներու և ջերմասէր զինքը սիրող բոլոր բարեկամներու սրտին մէջ:



Տեղից Պողոսեան անմոռանալի յիշատակներ թողած է Հայրենասիրութեան և բարեգործութեան: Ան իր ափը լայն կը բանար մանաւանդ կարօտեալներու, դաղթական հայերու և ուսանողներու: Իր սիրտը չէր դիմանար թշուառութեան առջեւ, կը սիրէր օգնել առանց ցոյցի և աղմուկի՝ առաջնորդուած միմիայն քրիստոնէական սիրով: Միւսանայ գաղութին մէջ ան նշանաւոր էր իր այս վեհանշն ու ազնիւ հոգիով:

Յուշարկաւորութեան ներկայ էր հայ ու խաւաքի բազմութիւն մը՝ նշան իր այնքան սիրուած ըլլալուն: Թաղումը կը կատարուէր Միւսանու «Մոնոմենթալ» գերեզմանատան մէջ Հ. Վահան Վ. Յովհաննէսեանէ՝ որ Ս. Ծննդեան առթիւ կը գտնուէր Միւսան: Յետ Միւսանի վարդապետին յուշուած խօսքերուն, որով հանգուցեալի բարեհամբոյր նկարագիրն ու քրիստոնէական հոգին վեր կը հանէր, խօսք առին նաեւ Տոբա. Արամայիս Արապեան ի դիմաց Միւսանու հայ Գաղութին և Պր. Հայկ Մաշտեան (ուսանող բժշկութեան) ի դիմաց հայ Ուսանողներու:

Տոբա. Ա. Արապեան կ'ըսէր իր գամբանակաւ նին մէջ.

Այսօր, օտար երկրի տակ, համայնակուել ցաւի մը մէջ՝ հոգին կը յանձնենք Տեառ Տեղից Պողոսեանը: Ոչ մէկ զրուստիք է հարկաւոր անոր յիշատակին ուղեւ, որովհետեւ բոլորս ալ քաջամասնօթ էինք իր անձին արտացոլող հմայքին, իր մաքուր և ամբասիր բարեկամութեան, իր հարազատ և օրինակելի հայու յուզիչ առատաձեռնութեան:

Իտալական գաղութը յանձին Տեառ Տեղից Պողոսեանի կը կորսնցնէ իր ամենայարգելի ազգայիններէն մին. ան, իսկական մարդը և իսկական մարդասէրը:

Քու հոգեհատորներուդ հետ հաւաքուած աճիւնիդ շուրջ՝ կ'ողջունենք քեզ անմահութեան սեմին, անմոռանալի Տեառ Տեղից Պողոսեան. կ'ողջունենք քեզ երկնաւոր լոյսին մօտ, ուր բարութիւնը կը փառաւորուի և առաքելութիւնը կը զգնուի իր ամենագեղեցիկ հանդերձանը:

Անիմանալի և խորին երջանկութեանը մէջ երկին՝ և աստղերուն թող խալտայ և հանգչի քու ազնուական հայու հոգին:

Այսօր մահուանդ վրայ կու լան քու սիրասուններդ, շուրջը շուրջը բարեկամներուդ անմիտ յայտով:

Այսօր դազալիդ վրայ կ'արտասուեն Սէրն ու Առաքելութիւնը:

Մենք երկեղածօրէն կը խոնարհինք յիշատակիդ առջեւ, և սրտերնիս զերյուզեալ քու անդարձ մեկնումով քեզ կ'ողջունենք մեր թաց աչքերով, և կ'ողբանք կուրուստով՝ որ անդարմանելի է, բարութիւնդ՝ քեզմէ ժառանգ ձգուած մեզի որպէս միմիարութիւն և որպէս նեցուկ մեր այս առաքելութիւն մարդկայնութեան փշոտ ուղիի ընթացքին:

Հողը թեթեւ թող ըլլայ վրայ, անմոռանալի Տեառ Տեղից Պողոսեան:

Հայկ Մաշտեան յայտնելով իր սուգն ու կսկիծը երեսասարգ ուսանողներու կողմէն՝ կ'ըսէր.

Պրն. Տեղից Պողոսեանի հետ հոգին կը յանձնենք այս բողոքին հայ մը, ազգային մը՝ որուն պէս քեզի, բայց շատ քեզի ճանչցած եմ եւս: Անիկա բարեկամ էր ամէնուն, հարուստին թէ աղքատին: Երկրաւոր յաջողութիւններ չէին պատած իր աչքերը քօղովը ետսիրուած թեան: Կը սիրէր նաեւ տեսնել ժպտել իր շուրջը եղողներուն: Կը սիրէր տեսնել ժպտել պանդուխտ հայրերին, որուն ճակարին վրայ գծուած էին կնճիւղները առաւելանքին... Պրն. Տեղից Պողոսեան երբեք չմերժեց իր կարեւորութեան սահմանին մէջ ջնջելու համար այդ կնճիւղները հայագի զաւակներու ճակատին:

Իցեւ թէ մեր բոլոր հայերը ըլլային իրեն պէս՝ իր որդիքը, և սիրելի Տեղիցը հպարտ թող ըլլան իր յիշատակով, այնպէս ինչպէս եղան երջանիկ իր կենդանութեան, որովհետեւ եթէ հանգուցեալը չեղաւ զրիչ մը ու հերոս մը, բայց անժխտելի է որ ան ճշմարիտ ազգասէր մ'էր, ու ասիկա առաքելութիւն մ'է համագործակցութեան զրիչն ու հերոսի սուրին:

Մեր ազգութեան է այս պահուն խնդրել Աստուծէ որ ապա պէտք եղած քաջութիւնը դիմագրաւուի այս ծանր հարուածը ամէն անոնց՝ որոնց աչքերն ու հոգին կու լան այսօր, և որոնց սրտին մէջ զրուած պիտի մնայ անջնջելի կերպով անունը ողբացեալ Տեղից Պողոսեանի:

Խմբագրութիւնս մասնակցելով սիրելի Պողոսեան ընտանիքի մեծ սուգին, կը հայցէ երկնքէն աստուածային օրհնութիւնն ու հոգեկան միմիարութիւնը՝ որ միայն կրնան դարմանել ահաւոր կորուստին պատճառած խորագոյն վիշտը:

ԽՄԲ.



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

- ԱՏԱՐՈՆԵԱՆ ԱՌԵՏԻՍ. — Ժողովածու երկերի (Հտ. Բ.). Պոսթըն. 1947, էջ 456.
ԱՂԱՃԱՆԵԱՆ ԳՐ. ՊԵՏՐ. ԺԵ. ԿԱՐԴ.-ԿԱԹ. — Թուղթ Հովուական. Պէյրութ. 1947, էջ 29.
ԴԻԻԱՆ Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ (Հտ. Ա. Բ.) — (Հրտ. Հ. Յ. Գ. Ամերիկայի կեդր. Կոմիտէ). Պոսթըն. 1934 և 1938, էջ 394 և 464.
ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ (Հրտ.). — Մի անյայտ ձեռագիր տաղարան. Թեհրան. 1947, էջ 46.
ՄԱՀՏԵՍԻ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Մ. — Ճշմարտութեան ուղիներով. Շտուտկարտ, 1947, էջ 80.
ՄԵՀԻԱՊԵԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ. — Երեւանի տաղեր. Աթէնք. 1947, էջ 80.
Երգեր Սիրոյ և Կարօտի. » » 128.
Կոմիտաս վարդապետ (1869-1935). Աթէնք. 1944, էջ 16.
ՄՈՐԳԱՆ (ԺԱԳ ԳՐ). — Հայ ժողովուրդի պատմութիւնը (Թրգմ. Երկայնեան Սարգիս). Պոսթըն. 1947, էջ 504.
ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԻՍԱԿ Խ. — Տաղեր և Յուշեր. Փարիզ. 1947, էջ 48.
ՇԱՀԱՄԵԱՆ ԳԱԻԹ. — Հանգրուան. Գահիրէ. 1947, էջ 83.
ՈՍՏԱՆԻԿ. — Ներաշխարհ. Թեհրան. 1942, էջ 64.
ՊՕՂՈՍԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — Թրքահայ սպայի մը օրագիրը (Հատոր Ա. Բ.). Փարիզ. 1941 և 1947, էջ 156 և 211.
ՌԵԻ. — Տրգատայ Սուրբ. Թեհրան. 1947, էջ 14.
ՍԱՐՈՑԵԱՆ ՈՒԼԵՐՄ. — Մարդկային կատակերգութիւն (Թրգմ. Կեսար Ա.). Պոսթըն. 1943, էջ 267.
Անունս Արամ է (Թրգմ. Համբարձումեան Մ.). Պոսթըն. 1945, էջ 191.
ՍԻՐԵՄԵԱՆ ԱՐՏԱՒԱԶՐ ԱՐԲԵՊՍ. — Թշուառի զգայութիւններ. Փարիզ. 1947, էջ 319.
ՏԱՏԵԱՆ ՎԱՀՐԱՄ. — Գարեկի արկածները. Ֆրէզնոյ. 1947, էջ 663.
ԳԱՐԵԼ ՏՈՒԹ. ԱԼԲԵՍԻՍ. — Աշտը. (Թրգմ. Պալլադեան Սահակ). Գահիրէ. 1948, էջ 24.
ՕՆՆԵԱՆ Տ. ԱՆԻԲ. — Սանասար և Բաղդասար (Փոքր Մէր). Թեհրան. 1948, էջ 40.
ԱՐԱՐՍ. — Գրպանի Տարեցոյց. Ը. տարի. Աղեքսանդրիա. 1948, էջ 139.
ԿԵԱՆԲ և ԳԻՐ. — Տարեգիրք 1938. Գահիրէ. 1948, էջ 264.
ՀԱՅՐԵՆԻ. — Տարեգիրք Տոնացոյց 1947 և 1948 (Հրտ. Վրացեան Ս.). Պոսթըն. 1948, էջ 160.
ՄԵԱՅՈՑ. — Ազգաբնակից Տարեգիրք. Ա. տարի (Հրտ. Աղաթան Թ.). Սթանպուլ. 1948, էջ 109.
Vratsian Simon. — Armenia and the Armenian Question. Boston. 1943, pg. XII 109.
Vrouyr N. E. — Inscriptions Ourartéennes et Annales des Rois d'Assyrie. Anvers. 1944, pg. 35 (4°).

« ԲԱԶՄԱՎԵՊ » ԵՒ « ԳԵՂՈՒՆԻ »

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

- ԱՄԵՐԻԿԱ. Պր. Ենովք Լաչինեան, 268 Northampton St. Boston 18, Mass.
ԼՈՆՏՐԱ. Պր. Արշակ Սաֆրաստեան, 18 Eton Villas, London N. W. 3.
ՓԱՐԻԶ. Պր. Բարգէն Պոստեան, 22 Rue Stendhal, Paris (20).
Կամ Սեւրի Մուրատեան վարժարան, 26 Rue Troyon, Sèvres (S. et O.).
ՄԱՐՍԻԼԻԱ. Պր. Յովսէփ Ուլուհոնեան, 31, Rue St. Basile, Marseille (France).
ՊԵԼԻՃԻՔԱ. Պր. Ժան Փիլիպպոսեան rue d'Oultremont 61, Bruxelles. IV.
Կրամական առաքելութիւնը կատարել C. C. P. 197185.
ԳԱՀԻՐԷ. Պր. Յ. Գուժրուեան C/o Drog. Impériale 6, Av. Fouad Ier.
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. Շէւցի Միլիթարեան վարժարան, 18 Rue Station Shutz, Alexandrie.
ՊՈԼԵՆՈՍ ԱՅՐԷՍ. Պր. Փանոս Էօրնէքեան, Cnel Niceto Vega 5531.
ՍԻՐԻԱ և ԼԵՐԱՆ. Հ. Եսայի Գուրդեան, Միլիթ. վարժարան, Հալէպ.
ՄԻԼԱՆ. Օր. Պերճուհի Պողոսեան, Viale Porta Vercellina 1, Milano.
ՊՈԼԻՍ. Հ. Յակոբոս վրդ. Բոսպորէքեան, Collège mekhitariste, Péra, n. 30.
ԽԱՐԹՈՒՄ. Պր. Յովսէփ Թըբըրեան, Poste Restante, Khartoum (Sudan).